«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՄԲԻՏ»
ԱՐԱԳ ՇԱԽՄԱՏԻ ԹԻՄԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ, Street Ball Armenia

3. ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ

ՄՐՑԱՇԱՐԸ կանցկացվի Մանկական այգում (ք.Երևան, Զաքյան 13/2)
Նախկին անվանում՝ Կիրովի անվան մանկական այգի

4. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Մրցաշար տեղի կունենա 2026 թվականի ապրիլի 26-ին, ժամը 12:00-ին:

5. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Թիմի կազմում պետք է լինեն 2 մասնակից, մեկ անչափահաս /մինչև 18տ./ և մեկ մեծահասակ /տարիք 30+/: Պարտադիր պայման է ընտանիքի անդամ լինելը /**հայր, մայր, տատիկ, պապիկ, հորեղբայր, հորաքույր, մորեղբայր, մորաքույր...**/:

*1-ին խաղատախտակում պետք է խաղա անչափահաս շախմատիստ, 2-րդ խաղատախտակում՝ մեծահասակ:

Մրցաշարում չեն կարող մասնակցել 2200 և ավելի վարկանիշ ունեցող շախնատիստները:

6. ՄՐՑԱՆԱԿ

Մրցաշարի համար նախատեսված են թիմային և անհատական մրցանակներ, ինչպես նաև սահմանված են հատուկ մրցանակներ:
Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ:

7. ՄՐՑԱԿԱՐԳ

7.1 Մրցաշարը կանցկացվի թիմային հաշվարկով՝ 2 խաղատախտակով:

7.2 Մրցաշարը կանցկացվի ըստ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների, շվեյցարական մրցակարգով՝ 6-7 խաղափուլով /կախված մասնակից թիմերի քանակից/:

7.3 Յուրաքանչյուր մրցախաղում թիմային հաղթանակը գնահատվում է 2 միավոր, ոչ-ոքին՝ 1 միավոր, պարտությունը՝ 0 միավոր: Մրցանակների հավակնող թիմերի հավաքած միավորների հավասարության դեպքում հաշվի է առնվում,

ա/ թիմի անդամների անհատական արդյունքների հանրագումարը,

բ/ թիմերի միջև անհատական հանդիպման արդյունքը,

գ/ ըստ անչափահաս շախմատիստի ցույց տված արդյունքի:

Եթե այդ ցուցանիշն էլ է հավասար, ապա անցկացվում է լրացուցիչ մրցախաղ (մրցաշար-մրցախաղ՝ կայծակնային խաղի կանոններով յուրաքանչյուր խաղացողին տրվում է 5-ական րոպե):

7.4 Եթե խաղատախտակների վրա 2 և ավելի խաղացողներ ձեռք են բերել հավասար միավորներ, ապա որպես լրացուցիչ ցուցանիշ հաշվի է առնվելու իրենց հակառակորդների միջին գործակիցները, եթե այդ ցուցանիշն էլ է հավասար ապա անցկացվում է լրացուցիչ մրցախաղ (մրցաշար-մրցախաղ՝ կայծակնային խաղի կանոններով յուրաքանչյուր խաղացողին տրվում է 5-ական րոպե):

8. ԺԱՄԱԿԱՐԳ

10 րոպե մինչև պարտիայի ավարտը (2 վայրկյան հավելումով՝ յուրաքանչյուր քայլին, սկսած առաջին քայլից):

9. ԳՐԱՆՑՈՒՄ

Նախագրանցման հղում՝ https://forms.gle/So314g1QqcALToNP8

ՎՃԱՐՈՒՄԸ ՄԻԱՅՆ ՏԵՂՈՒՄ!!!

Մուտքավճարը 1 մասնակցի համար կազմում է 2000 ՀՀ դրամ /2000 դրամ վճարում է անչափահասը, 2000 դրամ՝ չափահասը/:

* Վճարումը **չափահասների** համար **Idram** հավելվածով:
* Վճարումը **անչափահասների** համար միայն Idram Junior հավելվածով:

Վճարում՝ 26.04.2026 – ժամը 10:30 – 12:00

Գրանցումը հաստատվում է տեղում վճարումը կատարելուց հետո:

10. ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Հեռ՝ +374 10 448473, +374 43 448473, էլ. փոստ՝ info@chessacademy.am